InfraDesign

# Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն
# Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

*ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 70*

*Երկաթուղայինների փողոցի 2-րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատվածի վերակառուցում և ասֆալտապատում*

«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

Տնօրեն --------------------------------- ***Ա.Հովհաննիսյան***
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---------------------------------- ***Գ. Փարսյան***
(ստորագրություն)

Կ.Տ.

«---------------» ------------------------------------ 2025թ

Երկաթուղայինների փողոցի 2–րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատվածի վերակառուցում և ասֆալտապատում



## Երկաթուղայինների փողոցի 2–րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատվածի վերակառուցում և ասֆալտապատում

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քարտեզ
Բովանդակություն
Լիցենզիա
Տեխնիկական բնութագիր
ՃՀԱ
Բացատրագիր
Պահանջվող տեխնիկական միջոցներ
Օրացուցային գրաֆիկ
Աշխատանքային ռեսուրսներ
Պահանջվող լաբարատոր փորձարկումներ

*ԱՄՓՈՓԱԳՐԵՐ*

1. Հողային աշխատանքների ամփոփոզիր - Ամփոփագիր 1
2. Երթևեկելի մասի վերականգնման ամփոփագիր - Ամփոփագիր 2
3. Մուտքերի և իջատեղերի ամփոփագիր - Ամփոփագիր 3
4. Բետոնե վաքերի և ջրընդունիչների ամփոփագիր - Ամփոփագիր 4
5. Համահավաք ամփոփագիր - Ամփոփագիր 5

*ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ*

1. Երթևեկության կարգավորման սխեմա
2. Օբյեկտի սկզբում և վերջում տեղադրվող տիպային նշան
3. Ճանապարհային հագուստի և հենապատի կոնստրուկցիա
4. Ե/բ վաքի կառուցում

*ԳԾԱԳՐԵՐ*

1. Հատակագիծ: 1
2. Երկայնական կտրվածք: 2
3. Լայնական կտրվածքներ: 3-4-5

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Լիցենզիա ՔՊԼ-001679, 2-րդ դաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001679, 2-րդ դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-10-30, «ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՌՈՒԲԻՆՅԱՆՑ Փ., 2/3, 50 ԲՆ.

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 30.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG49-5A77-E957-8161**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Լիցենզիյի ներդիր  ՔՊՆ-001679-09

1 / 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001679-09

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ՝ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ԹՈՒՆԵԼՆԵՐ, ՈՒՂԵԱՆՑՆԵՐ, ԷՍՏԱԿԱԴԱՆԵՐ, ՀԵՆԱՊԱՏԵՐ ԵՎ ԱՅԼՆ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

30.10.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 30.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG91-5E3F-B1A9-E957**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | |
|---|---|
| **Նախատեսված ճանապարհների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ** | |
| **Ծրագրի անվանումը** | **Երկաթուղայինների փողոցի 2-րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատվածի վերակառուցում և ասֆալտապատում** |
| **Ֆինանսավորման աղբյուր** | 2026թ. Կապանի համայնքապետարան |
| **Պատվիրատու** | Կապանի համայնքապետարան |
| **Աշխատանքների անվանումը** | Նախատեսված ճանապարհների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ |
| **Ա/ճանապարհների անվանումները և հատվածները** | **Երկաթուղայինների փողոցի 2-րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատված**<br>**200,0 մ, 800,0 քառ.մ** |
| **Նախագծման փուլը** | Աշխատանքային նախագիծ |
| **Ճանապարհների կարգը** | 3-րդ կարգ |
| **Երթևեկամասերի ծածկի տեսակը** | **Սալաքար, բնահող** |
| **Ընդհանուր դրույթներ** | ●Յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն **<u>հայերեն և ռուսերեն լեզուներով՝</u>** հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDFֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով):<br>●Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրարման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի: |
| **Հիմնական պարտականություններ և պահանջներ** | **Հիմնական պարտականություններ՝**<br>●Ինժեներական հետազննման աշխատանքների իրականացում:<br>●Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:<br>●Ճանապարհի ծրագծի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգետնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխմաննախագծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում:<br>●Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:<br>**Հետազննման վերաբերյալ պահանջներ՝**<br>●Ինժեներական հետազնումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծայինլուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,<br>●Հետազննման ընթացքում հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով առնվազն **<u>յուրաքանչյուր 330 մետր տեղամասում, (իսկ նստվածքային տեղամասերում պարտադիր՝ առնվազն 2մ խորությամբ)</u>** կատարել հորատումներ՝ ճանապարհային պատվածքի շերտի հաստության, պատվածքի շերտի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման |

| | |
|---|---|
| | անհրաժեշտ խորությամբ և վիճակի գնահատում:<br>●Հետզննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:<br>**Նախագծերի նկատմամբ պահանջներ**<br>●Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:<br>●Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝<br>**√ Հողային պաստառի վերականգնում/վերակառուցում/ կառուցում(ըստ անհրաժեշտության),**<br>**√ Հենապատերի վերականգնում /վերակառուցում/ կառուցում (ըստ անհրաժեշտության),**<br>**√ Ճանապարհային պատվածքի վերականգնում /վերակառուցում/ կառուցում (ըստ անհրաժեշտության),**<br>**√ Մայթերի նորոգում, բազալտե եզրաքարերի տեղադրում (ըստ անհրաժեշտության),**<br>**√ Ջրահեռացման համակարգերի վերականգնում /վերակառուցում/,**<br>**√ Արհեստական կառուցվածքների վերականգնում /վերակառուցում/ կառուցում(ըստ անհրաժեշտության),**<br>**√ Ճանապարհի կահավորում,**<br>**√ Անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:**<br><br>**Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝**<br>●Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝<br>√ Բացատրագիր (որն իր մեջ կներառի հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետզննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի,հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացնելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա-մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմը),<br>√ Ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելիեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),<br>√ Գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կոորդինատներով, ճանապարհի երկայնքով կտրվածքը, |

| | |
|---|---|
| | լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար կախված հարակից տարրերից),<br>✓ Նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներարեն ծավալների մասնագրերը),<br>✓ Տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծվող ընդգրկվող կառուցվածքների, նախատեսվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսազդանշանային առկայծող լապտերներով կահավորելուսխեման և այլն),<br>✓ Ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքներ՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման,տեղափոխման մեխանիզմների աաշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկիկոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կամրջի կոնստրուկտիվ տարրերի նորոգման՝ ըստ աշխատանքի տեսակի, կահավորման և անվատանգության տարրերի՝ ըստ աշխատանքիտեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր),<br>✓ Համահավաք ամփոփագրեր,<br>✓ Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնելով չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),<br>✓ Նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբեկտային և տեղային նախահաշիվ):<br>**Համաձայնեցումներ՝**<br>●Նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ,<br>●Համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,<br>●տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,<br>●կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլնն)տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ: |
| ***Նորմատիվային պահանջներ*** | ●Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:<br>●Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն: |

| | |
|---|---|
| | ●Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն:<br>●Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ IV-11.05.02-99, ՇՆուԿ 2.05.03-84 «Կամուրջներ և խողովակներ» շինարարական նորմերով, ՄՄ ՍԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն:<br>●ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցներով սահմանված պահանջների համաձայն:<br>●Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10,01,2008թ,-ի թիվ 113-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:<br>●Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23,06,2011թ,-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:<br>●Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-97, ГОСТ 21.501-93 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն: |

| **Ծառայության մատուցման ժամկետը** | |
|---|---|
| **սկիզբը** | **ավարտը** |
| Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման ավարտը՝ 70 (յոթանասուն) օրից, հաշված պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման մեկնարկի օրվանից: |

ՁԼ N 1-2

PMAC-455A-FDFF-E672

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

**N ՆԹ-10697-25 26.11.2025թ.**

Օբյեկտ **Վերակառուցում, ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան քաղաք, Երկաթուղայինների փողոցի 2-րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատվածի վերակառուցում և ասֆալտապատում,**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

200,0 մ, 800,0 քառ.մ

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

**նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ III** նախագծային փաստաթղթերի մշակման համար։

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան քաղաք, Երկաթուղայինների փողոց 2-րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատված,**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 26.05.2027թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

1. Հողամասը գտնվում է — բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողերում

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափսերը

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա))

3. Հողամասի առկա վիճակը — կառուցապատված

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — առկա են

(Ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

| | |
|---|---|
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | համաձայն ներկայացված սխեմայի<br>(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա) |
| 6. (*) Կից հողամասեր | ավտոտնակներ, զբաղեցված և ազատ տարածքներ, անհատական բնակելի տներ<br>(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի) |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | չկան<br>(հուշարձանի անվանումը) |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | համաձայն ներկայացված սխեմայի<br>(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյկտների, ինժեներարանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները) |

**Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն  Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը**

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | մշակել համայնքի Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի 2-րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատվածի՝ ճանապարհային պատվածքի վերականգնման /վերակառուցում/ կառուցման (ըստ անհրաժեշտության հենապատերի վերականգնման /վերակառուցում/ կառուցման (ըստ անհրաժեշտության), ջրահեռացման համակարգերի վերականգնման /վերակառուցում/ (ըստ անհրաժեշտության), ճանապարհի կահավորման, անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման, վերակառուցման և ասֆալտապատման նախագիծ<br>(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ) |
| 9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | |
| 9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյկտներից) (մետր) | համաձայն ներկայացված սխեմայի |
| 9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր) | <br>սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%) | |
| 9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%)) | |
| 9.7 այլ պահանջներ | |

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2 (*) Էլեկտրամատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն — «Կապան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ պայմանագիր

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — կազմակերպված ջրահեռացում

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում — տարածքի բարեկարգում, ասֆալտապատում

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր — խիճ, ասֆալտբետոն, բիտում և այլ շինարարական նյութեր

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներներ — համաձայն գործող հակահրդեհային նորմերի

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — համաձայն ՀՀՇՆ 23-101-2017թ. նորմերի

19. Շրջակա միջավայրի պահպանում — շին.աղբը կազմակերպված տեղափոխել 11,2 կմ հեռավորության վրա՝ աղբավայր

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — սահմանափակել շին. տարածքը, կազմել աշխատանքների իրականացման ժամանակացույց

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — մինչև 26.05.2027թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ,

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — Պարզ փորձաքննություն հարկավոր է

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում — Կապանի համայնքապետարան

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորոջությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

28. Այլ պայմաններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

# *ԲԱՑԱՏՐԱԳԻՐ*

## *1. Ներածություն*

*Սույն նախագծով նախատեսված է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի 2–րդ նրբանցք տանող ճանապարհի մի հատվածի վերակառուցում և ասֆալտապատման աշխատանքների նախագիծը:*

*Նախագիծը կազմվել է ըստ Կապանի համայնքապետարանի տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և N70 եռակողմ պայմանագրի կնքված «ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի և Կապանի համայնքապետարանի կողմից:*

*Նախագծային փաստաթղթեր կազմելիս օգտագործվել են ՀՀ-ում գործող նորմատիվ-իրավական ակտերը, ՀՀՇՆ-երը և ԳՕՍՏ-երը:*

*Վերակագնվող տեղամասը գտնվում է Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի 2–րդ նրբանցքi սկզբնամասում: Ընդհանուր երկարությունը կազմում է 122գծ.մ:*

*Ներկայացված տեղամասի հետախուզական աշխատանքները իրականացվել են 2024թ.-ի մայիս ամսին: Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF02-ARMWGS), բարձունքային համակարգը՝ Բալթիան 1977թ.: Հորիզոնականների անկումը՝ 1.0մ:*

***Գոյություն ունեցող ճանապարհի նկարագրությունը***

*Հողային պաստառը և ճանապարհային պատվածքը գտնվում են ոչ բավարար վիճակում: Երթևեկային մասի ա/բ պատվածքը ընդհանրապես բացակայում է, առկա են բազմաթիվ փոսեր, որոնք լցված են գրունտով: Լայնական թեքությունը չի համապատասխանում նորմերի պահանջներին, բացակայում է ճանապարհի երթևեկելի մասից ջրահեռացումը:*

*Կողնակները և հողային պաստառի շեպերը քայքայված են, կողնակները ցածր են կամ լայնական թեքությունը չի համապատասխանում նորմերի պահանջներին կամ ընդհանրապես բացակայում են:*

*Անմխիթար վիճակում են նաև երթևեկության կազմակերպման ու անվտանգության տարրերը, ճանապարհային նշանները չկան, բացակայում է նաև գծանշումը:*

## *2. Տեխնիկական պայմանները*

*Նախագծային աշխատանքները կատարելուց ղեկավարվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամաններով հաստատված 12.12.2022թ N28-Ն ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», 08.07.2022թ N16-Ն ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ», 21.06.2022թ N12-Ն ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերով և 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին> N105-Ն հրամանով: Նախագիծը կատարվել է AutoCad և Civil3D համակարգչային ծրագրերով:*

*Նախագծային աշխատանքներն իրականացվել են համաձայն գործող նորմերի և տիպային նախագծերի՝ պահպանելով գոյություն ունեցող ճանապարհի պարամետրերը: Նախագծում ընդունված են ա/ճ պարամետրերը(ըստ առաջադրանքի)՝*

- *Երթևեկային մասի լայնությունը տարբեր է, քանի որ տվյալ ճանապարհահատվածը գտնվում է խիտ բնակեցված բնակավայրում, բոլոր կողմերից գտնվում են բնակելի տներ, ցանկապատեր, պարիսպներ, իսկ երթևեկելի մասը բավականին նեղ : Ըստ առաջադրանքի և պատվիրատուի պահանջի հնարավորինս պատվածքը լայնցվել է կպնելով գոյություն ունեցող տներին և պարիսպներին:*

*Հիմնվելով գեոդեզիական ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա՝ նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները՝*

- *Կատարել քանդման աշխատանքներ*
- *Կառուցել եզրաքարերը*

- *Տեղադրել երթևեկելի մասի շերտը*
- *Կառուցել կողնակները*
- *Կառուցել ջրահեռացման վաքեր:*

***3. Հատակագիծ և երկայնական կտրվածք***

*Նախագծվող ճանապարհների հատակագիծը և երկայնական պրոֆիլը համարյա փոփոխության չեն ենթարկվել, փոփոխվել է որոշ հատվածներում ջրահեռացման ավելի արդյունավետ կազմակերպման համար:*

*Նախագծվող ճանապարհահատվածի երկարությունը 0.122կմ:*

*Ճանապարհի հատակագիծը անցնում է գոյություն ունեցող ճանապարհով:*

*Հատակագծում շրջադարձի անկյունները նշահարված են շրջանային կորերով:*

*Հատակագծում տեղամասը ունի հետևյալ ցուցանիշները.*

- *Տեղամասի երկարությունը 0.122մ*
    - *Շրջադարձի անկյունների քանակը՝ 6 հատ.*

*Ոլորոյնության գործակիցը -0.16*

*Երկայնական կտրվածքը կազմված է տեղանքի բարձրության պայմանական նիշերով:*

*Երկայնական կտրվածքում էական փոփոխություն չի կատարվել:*

*Երկայնական կտրվածքում առավելագույն թեքությունը կազմում է 315‰, իսկ մինիմումը՝ 120‰:*

***4. Հողային պաստառ***

*Նախագծում ընդունված հողային պաստառի կոնստրուկցիան և տիպերը բավարարում են գործող տեխնիկական նորմերին և պայմաններին:*

*Տեղանքի ռելիեֆի պայմաններից և բնահողերի բնութագրից ելնելով՝ հողային պաստառի կայունությունը հնարավոր է ապահովել կառուցման կանոնների ու ջրահեռացման պահանջների պահպանման դեպքում:*

- *Երթևեկային մասի լայնությունը՝ 3.6-6.0մ*

*Երթևեկելի մասի լայնական թեքությունը ընդունված է 12‰ :*

*Բոլոր աշխատանքները ամփոփված են համապատասխան ամփոփագրերում:*

***5. Իջատեղեր և մուտքեր***

*Հիմնանորոգվող ճանապարհը հատում է բազմաթիվ իջատեղեր, ինչպես նաև բնակավայրում մուտքեր և փողոցներ:*

*Հատող իջատեղերում և մուտքերում նախատեսված է իրականացնել պատվածք 2.6-9.0գծ.մ երկարություններով:*

*Իջատեղերում և մուտքերում ճանապարհային պատվածքը նախատեսված է իրականացնել հետևյալ կառուցվածքով.*

- *Հատիկավոր ենթահիմք (Ավազակոպճային շերտ), ГОСТ 23735-14, Группа Ж17 - h=10սմ*
- *Չափազատված խճային հիմք (բիտումի տարածումով 4.12տ/1000մ2/), ՀՀՇՆ 32-01-2022 և СБОРНИК 27, - h=12սմ*
- *Բ տիպի II մակնիշի Խիտ մանրահատիկ ա/բ ГОСТ 9128-2013 Աղյուսակ 3, - h=4սմ*

*Ուղիներում և մուտքերում անհրաժեշտության դեպքում նախատեսված են տեղադրել մետաղական խողովակներ: Սակայն տվյալ ճանապարհահատվածում դրա անհրաժեշտությունը չկա:*

*Անհրաժեշտ աշխատանքների ծավալները ներկայացված են համապատասխան ամփոփագրերում:*

***6. Ճանապարհային պատվածք***

*Ճանապարհային հագուստի վերակառուցման համար նախատեսված իրականացնել հետևյալ կառուցվածքով.*

- *I շերտ, Բ տիպի II մակնիշի Խիտ մանրահատիկ ա/բ h=5սմ, մ2, ГОСТ 9128-2013 Աղյուսակ 3*

- *II շերտ, Չափազատված խճային հիմք (բիտումի տարածումով 4.12տ/1000մ2/), h=15սմ, մ2, ГОСТ 9128-2013 Աղյուսակ 3,*
- *IIIշերտ, Հատիկավոր ենթահիմք (Ավազակոպճային շերտ), h=10սմ, մ2, ГОСТ 23735-14, Группа Ж17*

*Ճանապարհային պատվածքի ընդհանուր մակերեսը կազմում է 620.4մ2*

*Ճանապարհի երթևեկելի մասը պահպանվել է մաքսիմալ հնարավորինս լայն, պատվածքի եզրը հնարավորինս մոտեցվել է ցանկապատերին, պարիսպներին և բնակելի տներին, որպեսզի բնակավայրի ներսում չառաջանան զրունյային մակերևույթներ, անցքեր, որոնք հանդիսանան հետագայում պատվածքի քայքայման պատճառ:*

## *7. Ջրահեռացում*

*Վերանորոգվող ճանապարհահատվածում ջրահեռացումը իրականացվում է մակերևույթային և ե/կ վաքերի միջոցով: Այնուհետև անձրևաջրերը հեռանում են դեպի Երկաթուղայիններ փողոցում գտնվող գոյություն ունեցող ջրընդունիչը:*

*Ճանապարհ թեքությունները բավականին թեք են, որը հանդիսանում է բնակավայրից անձրևաջրերի արագ հեռացման նախապայման: Մանրամասն տրված են գծագրերում և մասնագրերում:*

*Անհրաժեշտ աշխատանքների ծավալները ներկայացված են համապատասխան ամփոփագրերում:*

## *8. Ճանապարհային նշաններ*

*Երթևեկության կազմակերպման և անվտանգության նպատակով նախատեսված են ճանապարհային նշանների տեղադրում 1 հատ:*

*Նշանները նախատեսված են համապատասխան գործող ԳՕՍՏ Ռ 52290-2004 պետական ստանդարտի:*

## *9. ԱՄՑ չափանիշի փորձարկում*

*Ըստ ՀՀ կառավարության 2016թ-ի սեպտեմբերի 29-ի նիստի թիվ 38 արձանագրային որոշման անհրաժեշտ է կազմել մեթոդաբանություն ծածկի որակի գնահատման ընթացքում անհարթության միջազգային ցուցչի (ամց) չափանիշի փորձարկում: Ծածկը գնահատելու ամենակարևոր պայմաններից մեկը երթևեկելու որակն է: Ճանապարհի անհարթության կամ հարթության ստուգումներն իրականացվում են ծածկի վիճակը մշտադիտարկելու համար՝ նոր և վերանորոգված ծածկով երթևեկելու որակը գնահատելու նպատակով:*

*Անհարթության աստիճանի փոփոխությունը զգալի ազդեցություն ունի տնտեսական արդյունքների վրա: ԱՄՑ-ի չափումը թույլ է տալիս.*

*1) Իրականացնել օբյեկտիվ ծախսեր-օգուտներ վերլուծություն՝ սահմանափակ կապիտալ ռեսուրսների բաշխումն օպտիմալացնելու նպատակով:*

*2) Գնահատել ծրագրի փաստացի վերջնարդյունքները և դրանք համեմատել ակնկալվող վերջնարդյունքների հետ:*

*4. Հարթ ծածկերն ապահովում են հարմարավետություն, ստեղծում են տրանսպորտային միջոցների՝ ճանապարհով ավելի արդյունավետ շարժի հնարավորություն, բարձրացնում են երթևեկության օպտիմալ արագությունները, պահպանում են երթևեկության հոսքը, կրճատում են անվտանգության հետ կապված ռիսկերն օգտագործողների և նրանց տրանսպորտային միջոցների համար, ինչպես նաև կարող են բարձրացնել վառելիքի ծախսի արդյունավետությունը՝ ճանապարհն օգտագործողների համար հանգեցնելով երթևեկելու ավելի ցածր ծախսերի:*

*Անհարթության միջազգային ցուցանիշը (ԱՄՑ) պրոֆիլի տատանումների մաթեմատիկական բացարձակ գումարն է, որը նկարագրում է տրանսպորտային միջոցների վիբրացիա առաջացնող՝ ծածկի անհարթությունը:*

*ԱՄՑ-ի արժեքն սովորաբար ստացվում է հատուկ սարքավորման միջոցով, որը ցույց է տալիս ճանապարհի հատվածի հարթությունը:*

*ԱՄՑ-ն հաշվարկվում է որպես մոդելավորված կախոցի գծային շարժման հանրագումար՝ բերված պրոֆիլի երկարության, որի չափման միավորն է մ/կմ կամ մմ/մ:*

*Տվյալ ճանապարհահատվածի համար կախված ճանապարհի երկարությունից, անհրաժեշտ է իրականացնել ԱՄՅ ստուգում:*

## *10. 3.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*

*Շրջակա միջավայրի պաշտպանություն և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար հաշվի են առնվել ՀՀՇՆ 30-01-2014 դրույթները:*

*Շինարարական արտադրության կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ և աշխատանքներ, որոնք պետք է ընդգրկեն. շինարարության ընթացքում խախտված հողերի վերակուլտիվացում*

